


## ՎՈՀԱՆ Ա.ԲԵՂ. ԳԱԼԱՄԴԱՐՅԱՆ

### ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՄԱՍԻՆ



ոսկվայի «Հին ակտերի պետական կենտրոնական արխիվում» («Центральный государственный архив древних актов», կարձ՝ ЦГАДА) աշխատելիս, մենք հայտնաբերեցինք Մատթեոս արքեպիսկոպոս Վեհապետյանի կողմից Լազարյաններին ուղարկված երեք նամակ, որոնք արժեքավոր տեղեկություններ են պարունակում Միքայել Նալբանդյանի մասին:

Նշված նամակները գտնվում են Լազարյանների անձնական արխիվում և գրանցված են 1252 ֆոնդի 1848—1860 թվականների № 390 թղթապանակի 154, 158 և 168 էջերում: Թղթապանակը 451 էջանոց մի մեծ գործ է, հայերեն և ռուսերեն նամակներից բաղկացած:

Նամակների հեղինակը՝ Մատթեոս արքեպիսկոպոս Վեհապետյանը (1796—1866 թ. թ.), նոր-Նախիջևանի և Բեսարարիայի թհմակալ առաջնորդ եղած տարիներին (1847—1857 թ. թ.) հովանավորել և պաշտպանել է Նալբանդյանին հալածանքներից, ինչպես և օգնել նրան ուսուցական ասպարեզը մտնելու: Այս իրողությունը հանրահայտ է և գնահատված Նալբանդյանի կյանքի ու գործունեության ուսումնասիրությամբ զբաղվող գիտնականների կողմից: Ներկա երեք նամակները առավել ևս հաստատում են վերև հիշված փաստը և բարձրացնում Հայ եկեղեցու այդ ուսայալ և բարձրաստիճան հոգմորականին: Ի դեպ, անտեղի չէ, որ Նալբանդյանը Վեհապետյանին անվանում է իր «Ճնողագութ»

բարերարություն: Ներկա երեք նամակները սերտ կերպով առնչվում են Հովհաննես Լազարյանի այն կարգադրության հետ, որի հիման վրա Նալբանդյանը ընդունվեց Լազարյան ճեմարանում աշխատելու որպես ուսուցիչ:

Հիշատակության արժանի է այն, որ Նալբանդյանը Վեհապետյանի ուշադրությանը արժանացել է նրա առաջնորդության հենց առաջին տարում: Ահա թե ինչ է գրում Մատթեոս արքեպիսկոպոսը 1854 թվականի ապրիլի 24-ին Լազարյանին ուղղած իր նամակում. «Տակավին 1848 ամին, վասն մտավարժ ընդունակութեանց, կամք էին ինձ առաքել ի հանրահոչակ ուսումնարան Զերոյին Գերազանցութեան»: Գնահատելով Նալբանդյանի մտավոր կարողությունները, Վեհապետյանը, Հովհաննես և Խաչատուր Լազարյաններին ուղղված հանձնարարական նամակում (անվակիր, հավանաբար 1853 թ.) այսպիսի երաշխավորություն է տալիս Նալբանդյանի մասին. «Քաջալոյս եմ, թէ զօգտակարութիւն դորա և զհաւատարիմ բոյս բարուց Դուք ինքնին ի սուլ միջոցի ունիք ճանաչելու»:

Վեհապետյանի այս նամակը Հովհաննես և Խաչատուր Լազարյաններին, հավանաբար ուղարկված է 1853 թվականին: Այդ մենք ենթադրում ենք Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրում» հրատարակված իվան Ցակիմովիչ Լազարկի 1853 թվականի օգոստոսի 3-ի նամակից՝ ուղղված Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանի

1. Այս մասին տե՛ս Հավական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրում» (Հասարակական գիտությունների բաժանմունք), 1954 թ., № 7, էջ 102:

վարչության։ Այստեղ կազարյանը հրամալում է Նալբանդյանին ընդունել աշխատանքի։ Ահա թե ինչ է գրում նա. «Թեմական առաջնորդ Մատթեոս եպիսկոպոսի թախանձագին խընդրանքի համաձայն, առաջարկում եմ անմիջապես ընդունեք ինստիտուտ Նորին թարձը Մրբագնության բարեկամ Միքայել Նալբանդյանին՝ հայոց գրականության ուսուցչի պաշտոնով... նա կատարելապես տիրապետում է հայ գրականությանը և կարող է շատ օգտակար լինել մեր անվան ինստիտուտի համար... Չի կարելի աննկատ թողնել բարձրաստիճան այն եկեղեցականի խնդրանքը, որը մեծ ժառայություններ ունի մեր տան համար! և որը լավ հարաբերության մեջ է մեզ հետ։ Սպասում եմ բավարարող պատասխանին»<sup>2</sup>.

Պարզ է, որ կազարյանը Վեհապետյանից ստանալով մեր հրատարակած նամակները, առաջարկել է Նալբանդյանին ընդունել ճեմարան աշխատանքի՝ հայոց գրականության ուսուցչի պաշտոնով։

Սակայն Նալբանդյանը շատ քիչ ժամանակ՝ շուրջ շորս ամիս է դասավանդել կազարյան ճեմարանում, որովհետեւ շուրջ նրա դեմ սկսվել են ամբաստանություններ և նա հեռացվել է աշխատանքից։

Պետք է խոստովանել, որ Ներսես Ե. Աշտարակեցին, որը մեր եկեղեցական պատմության ականավոր դրական գեմքերից մեկն է, իր փայլուն անվան վրա մեծ ստվեր է դցել Նալբանդյանին հալածելու համար, իսկ որ նա հալածել է Նալբանդյանին, դա փաստ է։ Ներսես Ե. թշնամաբար էր տրամադրված Մատթեոս արքեպիսկոպոսի նկատմամբ և հավանական է նա աշխատել է իր վրեժը լուծել Վեհապետյանի հովանավորյալ Նալբանդյանից։ Որ իրոք Ներսես Աշտարակեցին է հանդիսացել Նալբանդյանի հալածողը, այդ վկայում է հենց ինքը Մատթեոս արքեպիսկոպոս մեր հրատարակած երրորդ նամակում։ «Բայց ի վերջոյ ի հարկի պահանջից նորա՝ ի նորին աստուածընակիր Վեհափառութենէ, ի բաց կացուցաի պաշտօնի յայնմանէ (այսինքն՝ ուսուցչությունից)։ — Վ. Ա. Գ.)<sup>3</sup>։ Վեհափառ ասելով նա ակնարկում է Ներսես Աշտարակեցուն։

1. Խնկապես Վեհապետյանը մեծ ժառայություն է մատուցել կազարյաններին։ Արմեվում բազմաթիվ գրություններ կան Ներսես Ե. և կազարյանների միջև փոխանակվում։

2. Տե՛ս «Տեղեկագիր», 1954 թ., № 7, էջ 83, Ժամանակ։ Յ.

3. Տե՛ս «Տեղեկագիր», 1954 թ., № 7, էջ 83,

Վեհապետյանի մեր հրատարակած երկրորդ նամակը գրված է 1854 թվականի հունվարի 5-ին Քիշնակց. այդ մի շնորհակալական նամակ է Վեհապետյանից կազարյաններին և Դիլանովին՝ Նալբանդյանին աշխատանքի ընդունելու կապակցությամբ։

Ուշագրության արժանի է Վեհապետյանի Հովհաննես կազարյանին ուղարկած երրորդ նամակը, որից երեսը է, որ նա խիստ վրշտացած է Նալբանդյանի հեռացման համար և գտնում է, որ Նալբանդյանը զրպարտության զո՞ն է։

Միքայել Նալբանդյանի՝ հայ հասարակական այս խոշոր գործիք մասին հայտնաբերած մեր այս երեք վավերագրերը գալիս են նորից ապացուցելու, որ իր ժամանակի բոլոր եկեղեցականները չեն, որ հալածել են Նալբանդյանին, ինչպես կարծում են ոմանք, այլև եղել են բարձրաստիճան հայ եկեղեցականներ, որ աշակել, հովանավորել են Նալբանդյանին։ դրանցից մեկն է հանդիսացել։

Մտորել տալիս ենք այդ վավերագրերը։

ԶԵՐՈՑԻՆ ՎԵՀԱ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆՆԵՐ  
ԱՂԱՅ ՑՈՎՃԱՆԱԷՆ ԵՒ ԱՂԱՅ ԽԱԶԱՏՈՒՐ  
ԱՅՈՎՃԱԿԻՄԵԱՆՔ

### Ողորմած Տեարք.

Ի նումբ քրիստոսական ողջունի՝ ծանուցանեմք, զի բնական օրէնք են զվաստակաւորն պսակել որչափ և որքան բերցէ նա յանձին զարժանաւորութիւն։ Ի վերայ այսր օրինաց ունիմք մեր և զպատուիրանս Մարդացելոյն վասն մեր Աստուծոյ յաղագս այսոցիկ նա և առաւել ճիշտ։ Յայսոցիկ հարկեալ կանոնաց խնդիր մի՛ է Մեր առ Զեր Վեհապնութիւն, զոր ի յարգանս մերոց առ Զեզ և առ բարեգուիեալ տուն Զեր սիրոյ՝ եթէ և յանկարելեացն լինիցի, սակայն պարտիք կատարել։

Գրամատոյցս այս հինգ ամեայ հարազատ քարտուղարն մեր ծագեալ ի սոսկական վիճակէ, որդի առն միջասահմանի, յետ ըստ իւրում խնդրոյ արձակելոյ ըստ անհրաժեշտի հանգամանացն ի հոգևորական կոչմանէ, հարկ ի վերայ նորա կայր որոնել ինքեան դեղանակ կենաց, մեր Աղինելով ցանկութիւն կորուսանել զնա ինքն և զծառայութիւն նորա որ առ մեզ, սովին յանձնարարական գրութեամբ առաքեմք առ Զեր Գերազանցութիւն քաջայոյս գոլով, թէ Դուք ըստ բնաւորեալ Զերոց մարդասիրութեանց կամ գէթ ի յարգանս մեր ունիր կատարել զինդիր մեր Դոյն դա գիտելով զիեզու մայրենի ցայն վայր մինչ կարող լինել դասախոսել յառաջին կամ

յերկրորդ կարգի վարժարանս և ունելով ի հա-  
սարակական տեսչութենէ զարձակուրդ, կա-  
րէ մատուցանել զանձն ի քննութիւն ի պաշ-  
տօն ուսուցչութեան յատենի համալսարանաց  
ժայրաքաղաքացդ կամ Ճեմարանի Զերոյ,  
որով ընկալեալ զիրաւոնս ուսուցչութեան՝  
յիրաւոնս լինի ապա մտանել և յարփոնի  
պաշտօն ուսուցչականութեան:

Ահա՝ խնդիրն՝ որպէս զի Դուք նախ և յառաջ  
ըստ Զերոյ դատողութեանց տաշիք զնա  
քննութիւն որոյ պէտք են, որպէս զի գիտել  
նորա զմայրենի լեզուն հաստատեսցի օրի-

նօք. եթէ վկայութիւն մեր չէ բաւական առ  
այն վախճան և ապա առաքեսջիք զնա ի  
Մոսկով ի Ճեմարան Զեր և կարգեսիք վար-  
ժապետ՝ եթէ ոչ ի բարձրագոյն՝ գէթ ի ստո-  
րին դասատունս, միայն թէ՝ նա համարելով  
ի ծառայութենէ՝ մարթասցի ստանալ զաստի-  
ճան և ապահովեսցէ զինքն յապագայ կեանս  
իր. զայսմանէ կարեք խօսիլ ընդ ծայրագոյն  
կառավարչի Ճեմարանին ընդ գերազանց  
Պութքովի, խնդրելով զնորայն շնորհ ի վերայ  
յիշատակեալ Նալրանդեանի, եթէ շուրջէ պա-  
րապ տեղի մտանելոյ ի Զեր Ճեմարան ի հա-  
յոց ստորին վարժապետաց, որք արդէն ունին

Ձերք մէկույթ և մատուցանութեան աշխատական

Բայց ուստի աշխատական

Յայք աշխատ ոչ արքայի կը անկայտեալ Ձեր պահա-  
պահ շահուն շնորհ ու առաջարկութեան շինուալու և թիւն նախարար  
շնորհ Շահուն առաջարկութեան առաջ պարագաներու և գու-  
յաց պահանձն առաջարկութեան առաջ պարագաներու և գու-

յաց պահանձն առաջարկութեան առաջ պահանձն

յան աշխատական  
տարի 1854.  
1854 յան աշխատական  
յան աշխատական

Մատրիոս արքեպիսկոպոս Վեհապետյանի 1854 թվականի հունվարի 5-ի նամակը  
Հովհաննես Լազարյանցին

զաստիճան արձակեալ, զդա խնդրեմք ի տեղի նորա կարգել, Քաջայոյս եմ, թէ ոգտակարութիւն դորա և գհաւատարիմ բոյս բարուց Դուք ինքնին ի սուղ միջոցի ունիք ճանալել: Վասն ոռնկի և բնակարանի և այլոց, աւելորդ համարիմ գրել, վասն զի Դուք քաջ գիտելով զամենայն, կարէք տնօրինել ի յարգանս մեր ո՞չ յօրինակ այլոց: Ցանձնեալ է մեր դժախոսիլ Զեղ երկարապատում Հանգամանօք զիւրց Հանգամանաց, վասն որոյ ի պատմել նմա Զեղ անդորր հոգով կարէք հաւատալ նմա առանց ինչ օտարոտի կարծեաց:

Զարձակագիր նորա ի հարկաց ընդ այսմ առաքեմք, առաքեցուք փութով և զմետրիկեան վկայութիւնն ի կոնսիստորիայէ տեղույս:

Յաղագս ապահովելոյ զիլիճակ և զկեանս իսկ՝ տարաբաղդ Նալրանդյանի զԶեղ միայն ունիմք միշնորդ և բաց ի ձէնչ ոչ զոք, վասն որոյ, եթէ հնարաւոր եթէ անհնար, պարտիք զանկարելիսն հնարաւոր արարեալ՝ կատարել զխնդիր մեր:

Այլ որովհետև հարկաւոր է մեղ փոխանակ Նալրանդեանի գրագիր ոք արժանաւոր ըստ վարուց, ըստ բարուց և ըստ գիտութեանց, որ գիտակ լիցի քաջ հայոց և ոռաաց լեզուի, առայն խնդրեմք ի Զեր Գերազանցութենէ առաքել զայնպիսի ոք ընդ որ գտչիք հաւան Զերով արժանադատ խոհականութեամբ:

Եւ մեք մնամք սպասեալ միամտական նամակի Զերում:

Զեր Գերազանց Վեհազնութեան ողորմած Տեարց խոնարհ աղօթարար՝

### ԱՐՔԵՊԻՍԿՈՓՈՍ ՄԱՏԹԵՈՍ

(Առանց թվականի, հավանաբար 1853 թվականից—  
կ. Ա. Գ.)

ԶԵՐՈՅԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՍՊԵՏ  
ՏԵՐ ՑՈՎՀԱՆՆԵԼ ՎԵՀԱԶՁՆ ԼԱԶԱՐԵԱՆՑ

Բարերա՛ր իշխան Հայկազեան.

Ցամին անցելոյ ո՞չ ստորութիւն ինչ համարեցիք Զերոյ Մեծանձնութեան զգենով զմայրն ամենայն առաքինութեանց զխոնարհութիւն և բերել հանդերձ նովաւ ի ծանուցումն ինձ զարարեցեալ Զեօք մեծի բարերարութեանց և միանգամայն զանից նորուն Գերազանցութեան Տեառն Դիլիհանովի առ գրագիրն իմ Միքայէլն Նալրանդեանց, որում յետ տալոյ զարժանաւոր վկայական՝ ուստի օրէն էր, շնորհ արարեալ զետեղեցիք զնա և ի

հոչակաւոր Ճեմարանի Զերում ի կարգի ուսուցչաց արևելյան լեզուի, որովք ուրախացեալ յոյժ, պարտաւոր զանձն իմ ծանեայ, փութալ ի գոհութիւն: Ապաքէ՛ն արդ՝ մատուցանելով սովորմբ Զերոյ Գերազանցութեան և Տեառն Դիլիհանովի զիհարերան շնորհակալութիւնս հանդերձ առատ օրհնութեամբ, աղալեմ զամենաբարձրեալն Աստուած յամենայնորէ, զի փոխարինեսցէ Զեղ և որք Զեր են ամենից՝ զանձառ զբարիս ի լեռնէ սրբութեան իւրոյ վայելչութեան: Եւ այլովք եմք և մնամք վասն Զեր միշտ աղօթարար:

### ԱՐՔԵՊԻՍԿՈՓՈՍ ՄԱՏԹԵՈՍ

Յամի ազգականի ՌՅԴ

Փրկչական 1854:

ի 5 յունիարի

ի Քիշնե:

ԶԵՐՈՅԻՆ ԱՍՊԵՏԱԿԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ,  
ԻՇԽԱՆԱՊԵՏ ՀԱՅԱԶՈՒԽ.

Ողորմած Տէր.

Ի հաւաստի լրոյ տեղեկացայ՝ որպէս զի թշնամասէր անձինք, որով և իցեն հասուցեալ և ի լսելիս Զեր զանիրաւացի զվատահամբաւութիւն զգրագրէ իմմէ զՄիքայէլէ Նալրանդեանց արդիս գտանելոյն ընդ Զերոյին հովանաւորութեամբ, իբրու թէ գտեալ իցէ նա երբեմն առ իս անհաւատարիմ և վնասակար՝ և որպէս թէ այնր աղագաւ ես ի բաց կացուցի զնա յինէն: Օն ա՞նդը, քաւ լիցի այդ, զի այդօրինակ տարածումն ստալից համբաւոյ գործ է միմիիայն կեղծարանութեան յանխղճից և ի խոռվարաց, որք ջանացեալ են թերևս ընդ ձեռն այնպիսւոյ զրպարտարանութեանց զրկել և հանել զնա ի Զերոց շնորհաց: Այլ ընդ հակառակն, պատանին այն զամենայն զժամանակս սպասարկութեան իւրոյ առ իս գտաւ ըստ ամենայնի հաւատարիմ յամենայն գործս: Զոր տակափն ի 1848 ամին, վասն մտավարժ ընդունակութեանց, կամք էին ինձ առաքել ի հանրահողակ ուսումնարան Զերոյին Գերազանցութեան, որ ի Մոսկվա՝ պապատան լինելով ի մեծ ազգասիրութիւն Զեր, զի մնալով նա անդ ընդ Զերով հովանաւորութեամբ, լցուցէ զթերին ուսման իւրոյ, և միանգամայն կատարեսցէ զպաշտոն ինչ համաձայն կարողութեան իւրոյ ի նմին ըստ Զերոյին

բարեհաճ տնօրինութեանց, առ ի գոտանել այնովիկ ի վերջոյ զշնորհս ի Զէնչ ըստ օրինակի բազմաց բարերարելոց, իսկ ի վերահաս հիւանդութեանց իմոց արգելայ ի կատարմանէ այնորիկ դիտաւորութեանս՝ աղաքաւ շոնելոյ առ իս զայլ որ ի պաշտօնակատարութիմ գրագորութեանց և թարգմանութեանց ի ոուսաց ի մերս բարբառ, յոր անշուշտ հարկաւոր էր նա ինձ, հուակ ապա ի վերջնում ժամանակի առաւել հարկաւոր համարեցայ ի դէմ այնպիսի հաւատարիմ ծառայութեանց նորա՝ կատարել զմտադրութին իմ աւուրբ յառաջ, քան թէ թողով առ իս ի նոյն գործս՝ որոյ յուսալի զատուս առ օգուտն, ափսոսալի միջոցօք ընդ վայր կորուանել, նմին իրի յանձնարարական թղթով առաքեցի յոտս Զերոյին Գերազանցութեան ի լրումն այնր ամենայնի, և առ այն գո՞ն եմ յոյժ զԶէնչ, զի ի յարգանս իմ, յամենայնի գտայք առ նա խնամածու, առաւել քան զոր յուսայի, և կատարեցիք զինդիր իմ կարգելով զնա ի Զերում մեծանուն ուսումնարանի ի պաշտօն ուսուցչութեան: Բայց ի վերջոյ ի հարկէ պահանջից նորա՝ ի նորին աստուածընտիր Վեհափառութենէ<sup>1</sup>, ի բաց կացուցաւ ի պաշտօնէ յայնմանէ մինչ ցատա-

ցումն պատասխանույ նոյն Վեհափառութեան առ բան Զերդ առաջարկութեան:

Ապաքէ'ն խնդրեմ խոնարհաբար ի Զերոյին Գերազանցութենէ դարձուցանել զմտադրութիւն Զեր ի հաւատարիմ բանս իմ, և սրբեսջիք ի մտաց Զերոց զօտարուտի կարծիս ընդ ձեռն թշնամեաց հասուցելոց՝ զնմանէ՝ և շարունակել զառաջին խնամս մարդասիրութեանդ առ յիշեալ պատանին նալրանցանց՝ մինչ ցընկալնով ի նորին Վեհափառութենէ վասն նորա զվախճանական եղրակացութիւն:

Եւս և ի դէպ լինելն պիտոյից այնր նալրանդեանցի շունելոյ ի ձեռս իւր զիւր զվկայագիրս, որք ենն այժմ ի կառավարութեան ուսումնարանի, մի՛ զանց արասջիք առ ի տնօրինել և զայնմանէ՝ զի յանձնեսցեն նմազամենայն, որում կարենորք են առ յապայն:

Յանձն առնելով զԶերոյին Գերազանցութիւն և զամենայն Զերոյինս աստուածային շնորհաց, մնամ վասն բարօրութեանց Զերոց միշտ աղօթարար,

Խ[ոնարհ] . Ճ[առայ]՝  
ԱՐՔԵՊԵՏԿՈՂՈՍ ՄՍ.ՏԲ-ԷՌՈՍ

Ի 24 ապրիլ  
յամի ազգականի ՌՅԴ  
և Փրկչական 1854,  
ի թիշեն:

1. Խոսքը ներսես Ե. Աշտարակեցու մասին է:

